

## Խուան ԵԼԱՆԳԵԶՅԱՆ

### ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺԾՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ԽՈԽԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) ՌԵՅՆԱԼՋՈ ՍԱՍՈՒԵԼ ԵԼԱԳԵԶՅԱՆԸ արգենտինակայ (Բուենոս-Այրեսից) քաղնաշնորհ մտավորական է (երգահան, երաժշտագետ, խճրավար, մանկավարժ, նկարիչ, գրող, բարգամանիչ), Եղիշենից մազապուրծ կիրավիահայ երգորդ սերմոնի շառավիդ: 1970-ակամեներին ավարտել է Երևանի պետական երաժշտականը, ծափակել բազմաթիվ գրքունեությամբ Հայաստան-Արգենտինա (և առհասարակ Սիլյուտը) մշակութային առնելությանների բնականառությամբ՝ մասնագիտորեն կատարենագործվելով հայ երաժշտութեանտ նախապահ Էլվարդ Միջոցամբ դեկավարյանը՝ դրան առենախուսական հայցորդ:

Հայապարակումն ուշագրավ է հատկապես այն առողջություն, որ խորքային ամփոփ վերպուծության են ենթակամ արգենտինական ժողովրդական երաժշտական գործիքները, որպես իսպանական (նկար) ու հնդկացիական (տեղարժեկ) շարք կենակարանյան մշակութային փոխներափականցման արգամիք: Իսկ միջնադարում իսպանական մշակույթը, մանավանդ երաժշտությունն ու պարարվեստը, ներծծվել են առաջավորափական մշակույթին բնորդ հատկանիշներով՝ որպես ինտևաների արարագարքի լայնարձակ տիրապետության, որը մի քանի դար տարածված էր նաև Իսպանիայի վրա: Իսկ հայ երմասը, լինելով առաջավորափական պատմաշակութային խանճարանում ավանդ ներդրած որոշն պետք է որ, քեզու անուղղակի (գուցն և ուղղակի) մշակութապես առնչված լինի (արարականի ու գնչուականի միջնորդությամբ և արևելյան բուռն խանճարածրով) խապանականի հետ և դրա միջոցով՝ անցած Արգենտինա:

Հետագոր լատինամերիկյան ժողովրդական մշակույթին վերաբերող այս հրապարակումը, որը մի նորականություն է հնա Աշխարհի հանգուցմ է նոր Աշխարհի հետ, հայ երաժշտագետներին (հատկապես ժողովրդական երաժշտական նկազարաններով գրադարձներին) այդ առքիվ խորհելու տեղի կարող է տալ, ուստի և հանձնարարենի է դրա գետեղումը Շիրակյան հայագիտական ժողովածուի մեջ:

Դերենիկ Վարդումյան, պլոֆենոր, ազգագրագեն:

Արգենտինայի երաժշտական գործիքներն ունեն Եվլուսայից ժառանգած իրենց նախատիպերը: Եկվոր հոգլուրականները, ներմուծելով այդ գործիքները, տեղաբնակների համար իմնատրեցին երգի և երաժշտության առաջին դարցները, որոնք ստեղծվեցին հնդկացիների սոցիալական դաստիարակությունը ապահովելու նախատակությունում:

Արգենտինայի երաժշտությունն ընդհանրապես և երաժշտական գործիքները մասնավորապես, ձևավորելով են խապանական զաղութարարների և տեղաբնիկ հնդկացիների երաժշտական մշակույթի, ինչպես նաև երաժշտական գործիքների համադրության շնորհիվ: Սիսիներ հոգլուրականները, ներմուծելով խապանական երաժշտությունն ու երաժշտական գործիքներն իրենց նվաճած նոր տարածք, դրանց միջոցով աշխատում էին տեղաբնիկների միջավայրում տարածել խապանական քաղաքակրությունը: Այս ներմուծված գործիքները երկու տեսակ էին: Հոգլուրականները, բայց երգերից, տեղացիներին նաև սովորեցնում էին նվագել տարբեր նվագարանների վրա: Բացի այդ, զաղութարարները բերում էին նաև աշխարհիկ գործիքներ, որոնք աստիճանաբար նույն տեղացիների կենցաղի մեջ: Այսիսով, Արգենտինայի այժմյան երաժշտական գործիքարանը կազմակերպվել է վերը նշանակած երեք բաղկացուցիչներից: Հնդկացիները, ժամանակի ընթացքում յուրացնելով նվաճողների բերած գործիքների կազմությունը, հետագայում իրենք նույնականացնելով կարողացան պատրաստել դրանք:

Պատրաստման ընթացքում այս գործիքները որոշ փոփոխությունների ներարկվեցին տեղական նյութերի տարրերությունների հետևանքով: Սա նշանակում է, որ ժամանակի ընթացքում հայանիայից բերված գործիքները հարմարեցվել են իրենց նոր միջավայրին: Վերջիններին ավելացան նաև հնդկացիների երաժշտական գործիքները, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը, հատկապես զյուղական բնակավայրերում:

Արգենտինայի երաժշտական գործիքները միջազգային չափանիշներով կարելի է բաժանել մի քանի խմբի: Այսպիսի դասակարգման հիմքում ընկած է թրթումի կերպը. օրինակ, իդիոֆոնները այն հարվածային գործիքներն են, որոնց հնչյունը առաջանում է պարզ հարվածի շնորհիվ, առանց որևէ ծայնադարձիչի (ուղղանտորի): Թաղանթային գործիքները պատկանում են հարվածային գործիքների այն խմբին, որում հնչյունային ալիքը առաջանում է բաղանդին հարվածելու հետևանքով: Լարային են հանարվում այն գործիքները, որոնցում հնչյունի բրոռումը առաջանում է աղեղը լարին:

**հարվածեղուկ:** Փողային գործիքների խումբը այն է, որի դեպքում օդի սյունն է առաջացնում հնչյունի բրոռումը.<sup>1</sup>

**Օդային են համարվում հետևյալ գործիքները.** Ակորդեոն (Acordeón), անատա (Anata), երքե (Erke=corneta), երքենչո (Erkencho), բուկումանի սրինգ (Flauta tucumana), այնիկայու կամ թարրա (Pinquillo o Tarka), քենա (Quena), սիկու (Siku), պանի սրինգը (Flauta de Pan), բուրրուկա (Tutruca): *Լարային են համարվում տավղիլը (Agrpa), չարանգն (Charango), կիթառը (Guitarra), ջութակը (Violín): Թաղանքային են համարվում բոմբոն (Bombo), կախան (Caja), բամբորը (Tambor), բամբորիլը (Tamboril):* Իդիոֆոնն է համարվում եռանկյունը (trinngulo):

**Ակորդեոն.** Ժամանակակից օդային գործիք է, որը հաճախ օգուղերում փոխարինում է տավղին և ջութակին խումբ կազմելով բոմբոյի ու կիթառի հետ և հիմք ստեղծելով պարային արվեստի համար: Օգտագործվում է Արգենտինայի ողջ տարածքում: Կազմված է փուրսից և երքե ուրբայակ ձայնածավալ ունեցող ստեղմաշարից: Գոյություն ունի ակորդեոնի մի քանի տեսակ:

**Անատա.** Փողային պարզ գործիք է, ծագել է Բոլիվիայում: Արգենտինայի տարածում թիզ է հանդիպում, այն էլ՝ իմբնականում Խումբույում և Սալտայում: Երկարությունը 25-ից մինչև 50 սմ և պատրաստվում է փափուկ տեսակի փայտից: Պատերը հաստ են, միջին ավելի նեղ մասում կան վեց անցքեր: Ամառային ծեսերին այն գործածվում է դիմակահանդեսների ժամանակ:

**Երքե.** Փողային գործիքների խորից է երքեն կամ կոռնետան, մեծածավալ գործիք է՝ անհայտ ծագումով: Այն հյուսիսային Արգենտինան է ներքափանցել Բոլիվիայից: Նրա փողը երերից հինգ մետր երկարություն ունի և պատրաստվում է եղեգնի՝ վարպետության միահյուսված շերտերից:

Այս գործիքի վչերու անցքը տեղադրված է խոտորնակ (փշում են կոռքից): Հակառակ ծայրը կոնաձև է՝ եզրերը պատված կաշվով, եղջյուրով կամ արույրով: Գործիքը, որ այսքան խոշոր չափեր ունի, նվազողից պահանջում է մեծ հմտություն: Դրա կոնաձև մասը ընդհանրապես ուղղված է լինում դեպի երկինք և հավասարակշռում է այդ գործիքի ծանրությանը: Նվազողները, որ բացառապես տղամարդ են, նախընտրում են այս դիրքը, քանի հորիզոնականը, երբ գործիքի ծայրը հենվում է որևէ առարկայի: Երքեն ունի փոքր ձայնածավալ: Տարբեր ուժգնություն ունեցող հնչյունները փշելը առաջանում են ողը հիշեցնող մի նեղենի, որը խորիրդանշում է ձմեռային ցուրտ եղանակը, այդ պատճառով էլ այդ մեղեղիները կատարվում են ոչ թե գարնանը կամ ամռանը, այլ, ասեմբ, «Հյուսի մարմնի» (Corpus Christi) ծեսից հետո՝ «Բոլոր սրբերի օրը» (Día de todos los Santos), որ Արգենտինայում աշնան սկզբին է.<sup>2</sup>

**Երքենչո.** Շատ նման է երքեն, բայց ավելի փոքր: Տեղաբնիկների քիչուա լեզվով «-ենչո» նաև կանչիկը փոքրացուցիչ նշանակություն ունի: Նման է կլարնետին, սակայն վերջինիս կոչու տեսակն է, կազմված՝ երկու մասից՝ եղեգնյա մունդշտուկից և կոնաձև մասից, որով տարածվում է հնչյունը: Այս գործիքները միմյանցից տարբերվում են լեզվակը ծվանի (մունդշտուկ) մեջ մոցնելու տարրեր ձևերով: Սովորաբար ընկերակցում է կախային, որին հարվածում է նույն նվազողը՝ աջ ձեռքով: Սա ամառային գործիք է և գործածվում է այն ժամանակ, երբ լուս է երքեն: Երքենչոն հնչյուն է խումույական բլուրներում սկսած «Բոլոր սրբերի» օրից մինչև «Դիմակահանդեսը» (Carnaval): Կառնավալի մոխիրի չորեքշաբթի օրը:<sup>3</sup> Երքենչոյի հնչյունների երանցները ծանր են, բրոռուն և շատ արտահայտիչ, չնայած իրենց պարզ ինքրովիզացիոն բնույթին:

**Թուկումանական սրինգ.** Երաժշտագետ Կառլոս Վեզան նշում է, որ սա Արգենտինայի կրեոլների ինքնատիկ գործիքն է, որը հենց իրենք են պատրաստում եղջյուրից: Այն ունի 35 ամ երկարություն և 2 սմ տրամագիծ: Այս գործիքը հատկանշական է նրանով, որ Արգենտինայի նախալեռներում այն պատրաստում են կոնդորի ոսկորից: Գործիքն ունի վեց անցք: Երբ վերջիններս մատներով փակվում են, աստիճանաբար փոխվում է փողի երկարությունը՝ արձակելով հնչյունաշարի տարրեր հնչյուններ: Նշենք, որ այս գործիքի հակառակ ծայրը, որտեղից դուրս է մղվում օդը, քառակուսի ձև

<sup>1</sup> E. B en v e n u t o , Benvenuto E. G. Cultura Musical (4 volúmenes), Buenos Aires.

<sup>2</sup> G ó m e z Carrillo, Música del Norte Argentino, Buenos Aires.

<sup>3</sup> Նոյեմբեր:

ունի: Այս անցքը կարծես նախորդ վեց անցքերից հետո յոթերորդն է: Գործիքը կիրառվում է տեղաբնիկների ծիսական բափորը ուղեկցելիս: Տիպար երաժշտությունը հոգևոր բնույթ ունի:

**Պինկիյո.** Այս գործիքը կիրառվում է ամռանը, անվանվում է նաև թարքա (Tarka): Փոքրիկ եղեգնից պատրաստված սրինգ է: Սիակտոր գործիք է, որի երկարությունը 30 սմ է, տրամագիծը՝ 3 սմ: Փորվածքը կոճաձև է: Այս գործիքը իր անցքերով ննան է բուկունանական սրինգին և քենային: Մրա արձակած հնչյուններն ախտրժալուր են և հաճելի: Գործիքի ծայրը շեղ կտրվածք ունի, և փշելիս երթեմն օգտագործվում է զնապահայտ կամ խծուծ (Taco): Երաժշտական հնչյուններ առաջացնում են գործիքի անցքերը մատներով փակելու միջոցով:

**Չենա.** Ծագումով սա հարավամերիկյան հնդկացիների գործիք է՝ տարածված Արգենտինայի հյուսիս-արևմտյան տարածքում: Կատարողը տղամարդ է: Այժմ այն օգտագործվում է ամռանը: Հնում այս գործիքը հնդկացիները պատրաստում էին ուկորից, եղեգնից կամ էլ քրծած կալից, իսկ ներկայումս՝ միայն եղեգնից: Այս գործիքով հիմնականում ներկայանում է ինկերի (Incas) երաժշտությունը: Սա հնագույն գործիքներից մեկն է, որը կիրառում են երկու ցեղեր՝ այնարաները (Aimarns) և քիչուաները (Quichuas):<sup>4</sup> Գործիքի ծագման մասին մի շարք առասպելներ կան, որոնցից ոչ մեկը հավանական չէ: Չենան, որ ժամանակի ընթացքում որոշ փոփոխությունների է ենթարկվել, հիմնականում բաղկացած է ծվանից և գործիքի երկարությամբ բացված անցքերից: Մրա նոր օրինակները այնքան էլ չեն տարրերվում հներից: Չենան եղեգնից պատրաստված պարզ սրինգ է, որը բաց է ծայրամասերում, կտրվածքը քառակուսու ձև ունի: Այս գործիքի անցքերը չորսը, վեցը կամ յոթն են, որոնք մատների սեղմումով երկարացնում կամ կարճացնում են գործիքի միջով անցնող օղի սյունը: Երկարությունը տատանվում է 35-ից մինչև 70 սմ-ի միջև: Գործիքի մեծության և անցքերի քանակի տարրերությունները կատարվող երաժշտության հաղորդում են տարրեր բնույթը: Ըստ իր օգտագործման տեսակի ունի տարրեր ձևեր և անվանումներ, որոնք են՝ տրատրիպուլին (tratipuli), չոքելան (choquela) և քենա-քենան, որոնք ընկերակցում են միևնույն անվանումով պարերին: Մրանք համապատասխանաբար ստացել են նաև հետևյալ երեք անվանումները՝ քենա, քենաչ և քենալի (quena, quenacho և quenalai): Բուն քենան իր չափերով ամենափոքրն է՝ երկարությունը մինչև 37 սմ է, ունի վեց անցք: Մրա հնչողությունը քաղցր, անուշ և մելամաղձու է: Այն կիրառվում է որպես պարի նվազակցող գործիք, ինչպես նաև՝ նվազախմբի մեջ: Տրատրիպուլին իր չափերով քիչ ավելի մեծ է, քան նախորդը՝ թարմ հնչողությամբ, մեղմ ու զվարք: Այս գործիքով սովորաբար կատարում են վառ ոթքուն եղանակներ: Այն պարունակող նվազախմբերում մի խումբ քենահարմերին ընկերակցում է միմիայն մեկ տամբորի (Tamboril), որը կյանք է հաղորդում պարին: Չոքելան քենա-քենայի ավելի կոպիտ տարրերակն է, որն ունի չոր հնչողություն: Այն իր չափերով ավելի խոչքր է և ունի յոթ անցք:

Առավել տարածված գործիք է փոքր քենան, որը պատրաստում են եղեգնից և որն ունի վեց անցք, որոնցից հենցը վերևում և մեկը՝ հակառակ կողմում: Այս գործիքի համար հատկանշական է «ա» կտրվածքը փշելու մասում: Չանի որ սա ինկերի գործիք է, նրա ձայնաշարքը ինկերի պենտատոնիկան է և արտահայտում է հնդկացիների ազգային կոլորիտը: Այսպես մասնավորապես Խուխույի տարածքում կատարվում են Ուայնիսոն, Կատնավալիսոն, Բայլեսիսոն և Ժարավի պարեղանակները (Huainito, Carnavalito, Bailecito y Yaravú):<sup>5</sup>

**Սիրու.** Սիրոն քիչուաների լեզվով կոչվում է նաև «անտարա» (Antara): Ալտի-ալլանյում օգտագործվող գործիքներից մեկն է: Սա Արգենտինայի հյուսիս-արևմտյան մասն է՝ սահմանակից մի շարք երկրների հետ: Այստեղ կան ինկական պանի սրինգների բազմազան տեսակներ: Մրանցից մեկը բազմափող գործիք է պատրաստված մի քանի եղեգնից, որոնց ծայրերի կտրվածքը թեք լինելով առաջացնում է տարրեր երկարության գործիքների շարք: Միքոները, ըստ տրամագծի մեծության, հնչում են թավից մինչև սուր:

<sup>4</sup> Coluccio, Fellix. Diccionario Folklórico Argentino, Buenos Aires.

<sup>5</sup> Areitz, Isabell, El Folklore Musical Argentino. Música Tradicional Argentina, Buenos Aires.

Երբեմն այս գործիքը բռնում են մի ձևորվ, իսկ մյուսով հարվածում են բոմբոյին՝ այդպես կազմելով սիրուների խմբեր, որոնց հնչողությունը ուրախ է և ոգևորված: Այդ պատճառով էլ դրանք մասնակցում են ժողովրդական հանդեսներին, խճջույքներին կամ պարերին: Սիրուները լինում են եղեգների մեկ կամ երկու շարքով, ինչպես նաև կրկնակի երկու շարքերով, որ կազմում է չորս շարք՝ երկուական շարվածքով: Այս վերջինները պարունակում են անքող հնչյունաշարը, որը կարող է հնչեցնել մեկ երաժշտ: Խոկ նախորդները ստվորաբար հնչեցնում են երկու երաժիշտ, որովհետու հնչյուններն արտաքերվում են հերքով: Այժմ սրանք օգտագործվում են Խույսույի և Սալբայի հյուսում: Հատկանշական է, որ գործածվում են տարվա բոլոր եղանակներին ընկերակցելով հոգևորական ծեսերին որպես զավառական նվազախմբի անդամ:

*Թութքուկս.* Մեծ շնիփոր է, ծագումով արագուկանական: Իր բնույթով հիշեցնում է երեն, ունի երկար փող, որի երկարությունը 2-ից մինչև 6 մետր կարող է լինել: Պատրաստված է փայտից: Ծայրի կրնած մասը, որը բարձրացնում է գործիքի հնչողությունը, պատրաստված է եղջորից: Տարրերությունը էրթեից անցը եղեգնյա միջուկն է, որը շատ երկար և միաժամանակ շատ ներ է՝ տրամագիծը 3 սմ: Այս գործիքը քենայի, պինկիլյոյի կամ բուկումանական սրինգի նման անցքեր չունի, նվազողը գործիքի ծայրը դնում է մեկ մետր բարձրությամբ որևէ առարկայի վրա: Գործիքն օգտագործվում է բաղնան ծեսում:

*Տավիդ.* Երաժշտական գործիքների համակարգում լարային են անվանվում այն գործիքները, որոնց հնչյունը առաջանում է լարի տատանումից կամ թրռումից: Դրանք են տավիդը, չարանգն, կիրառ, ինչպես նաև ջուրակը:

Կրեռլական տավիդը (Agrpa Criolla) տարածված է Կաթամարկայի, Սալբայի, Սանտիագո դել Էստերոյի ֆոլկլորում: Սրա նախնական օրինակը ներմուծվել է Իսպանիայի XVII դ. և հետագայում կատարելագործվել է ոտնակլով (pedal): Այս գործիքի արգենտինյան տարրերակը, պահպանելով իր հիմնական բնութագիրը, հարավային Ամերիկայում առավել կատարելագործվելով, գերազանցեց իր նախնական տարրերակը: Այն կազմված է 33-34 լարերից, որոնք ձգված են ձայնադրձիչ և շքադարանի միջև: Էստ պատմաբան Ա. Գիյերմն Ֆուրլանդի՝ գաղութատիրության ժամանակ կիրառից հետո տավիդը ամենակարևոր տեղն ուներ: Այս բարդ լարային գործիքը առավելապես տարածված է Արգենտինայի հյուսում:


*Տավիդը գրավեց հնդկացիների ուշադրությունը.* Երանք նույնպես սկսեցին պատրաստել այդ բարդ գործիքը, որի տարածումը կարելի է համենատել դաշնամուրի տարածման հետ փոխազարդարական մշակութային կենտրոններում (Virreinato):<sup>7</sup> Լայն բնույթի հնչասանդրակը հարատացնում է գործիքի հնչողությունը: Այս գործիքով է կատարվում ազգային ուղղ երաժշտությունը, մասնավորապես, պարեղանակների մեջ մասը, որ ֆոլկլորիստները հավաքել են Արգենտինայի տարրեր տարածքներում:

*Չարանգը.* Չարանգոն նույնպես հարավ-ամերիկյան լարային գործիք է: Սա կրեռլական փոքր կիրառ է: Այն առաջացել է Սալբայում և Խույսույում և իր եւլուպական ծագման հետ միասին ունի նաև տեղական տարրեր: Չարանգոն Արգենտինա է հասել քիչ ավելի ուշ, քան Պերու և Բոլիվիա, այստեղից էլ աստիճանաբար ներքափանցել է Սալբայ: Չարանգոյի հիմք զոյլ լարերը հենվում են կամքջակի վրա և լարվում են բութակի օգնությամբ: Այս գործիքի յուրօհնակությունն այն է, որ ձայնադրձիչը պատրաստվում է բարույի խեցիով: Չարանգոյի ձայնածավալը կիրառի հետ համեմատած ավելի փոքր է, որովհետու լարերի տատանվող մասը 50-60 սմ է: Գործիքի լարվածքը նույնպես տարրերվում է ստվորական կիրառի լարվածքից (տես սոլի բանալով օրինակը): Կրեռմետը (հնդկացիների և ինպանացի եկվունդերի խառնուրդ) և մետիսները (սևանորթների և հնդկացիների խառնուրդ) այս գործիքով կատարում են այնպիսի տարածված պարեղանակներ, ինչպիսիք են Բայլենիքոները, Կառնավալիթոները, Ռախնիքոները, Ռախնոները և նաքուր պենտատոնիկայով եղանակներ:


<sup>6</sup> *Y elangueza I an, J. R. S. Curso de Historia de la Música Antigua. Inst. Gr. de Cultura Universidad Católica Argentina, Bs. As*

<sup>7</sup> *Willkerrero Cárpeta. Formas Musicales Rioplatenses, Bs. As.*


<sup>8</sup> *Areitz, Isabell, El Folklore Musical Argentino. Música Tradicional Argentina, Bs. As.*



Նկ. 1




Նկ. 2




Նկ. 3




Նկ. 4




Նկ. 5




Նկ. 6




Նկ. 7




Նկ. 8



Նկ. 9




Նկ. 10




Նկ. 11




Նկ. 12





Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16

**Կիրառ.** Կիրառը Արգենտինան են բերել խապանացիները XVII դ.: Ժամանակի ընթացքում այն տարածվել է ամբողջ երկրում՝ դասմալով ազգային գործիք: Սա տարբերվում է դասական կիրառից իր վեց լարերի ոչ բերած գույզ, այլ կենտ քանակով, որոնց լարվածքը վերից վար հետևյալն է. մի, սի, սու, ու, յա և մի:

**Եռանկյուն.** Ծագումով եզիստական գործիք է, սիստրի (sistre) տարբերակը: Այն հնչեցվում է մետաղյա ծողիկի հարվածով: Այս գործիքը կիրառվում է Արգենտինայի հյուսիս-արևմտաքում որպես պարեղանակների ոիբրմիկան ընդգծող գործիք:

**Բումբ.** Թաղանքային կամ հարվածային գործիք է, ինչպես կախան: Այս գործիքը հնչեցնում են ձողիկներով հարվածելով որա վրա ճգված կաշվին: Այն տեղի նվազախմբերի պարտադիր գործիքն է, կազմված է 50-60 սմ բարձրությամբ փայտե գլանաձև տուփից, որի երկու եզրերն ել պատված են ոչխարի, գառնուկի կամ այծի կաշվով: Հնչյունային զանազան նրբերանգները կարգավորում են նվազողը երկու կերպ: հաջորդաբար հարվածելով կաշվին և այն շրջապատող օղակին, որի հետևանքով առաջանում են տարրեր հնչողություններ: Արդյունքում ոիբրմական շեշտերը տեղափոխվում են և, հարվածների ընդհատումը մեղեղիներին հաղորդում է հատկանշական բնութագիր:

**Կախա.** Պատկանում է հարվածային գործիքների քաղանքային խմբին: Արգենտինայի հյուսիսում հայտնի է որպես հնդկացիների քանրոր (դիոլի նման) և տարածված է աշխարհագրական լայն շրջանակում: Կախան քաղկացած է փայտե օղակից, որի բարձրությունը տատանվում է քսանից մինչև քառասուն սմ-ի միջև: Սրա երկու եզրերը պատված են ոչխարի, գառան կամ այծի կոշտ կաշվով: Հնարավոր է շոշափելով ավելացնել կամ նվազեցնել օղով ճգված կաշվի պրկությունը: Կախայի քաղանքին կարելի է հարվածել և ձեռքով, և փայտիկներով:

**Թամբորիդ.** Սա մասսամբ կախային նմանվող գործիք է: Տրամագիծը կախայի հետ նույնն է, բայց երկարությունը մի քիչ ավելի է: Այն պատրաստված է փորած կոճդից, որի երկու եզրերը պատված են կաշվե քաղանքով: Ինչպես կախան և բոնրոն, սա նույնպես իր ոիբրմով ուղեկցում է քափորին հյուսիսային տարրեր զավարմերում:

Այսպիսով, Արգենտինայի տարածքում կենցաղավարող երաժշտական գործիքները իրմանականում տեղաբնիկների և եկվոր-զաղութարաբների ներմուծած գործիքների սինթեզն են: Սրանք ներկայում երկու տարրեր զավարմերում լայնորեն կիրառվող ազգագրական գործիքներն են, որոնք իրենց նախատիպերի որոշ չափով փոփոխված կամ կատարելագործված տարրերակներն են:

## АРГЕНТИНСКИЕ НАРОДНЫЕ МУЗЫКАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ

### Резюме

### X. Елангезян

Аргентинские музыкальные инструменты имеют свои европейские прототипы. Испанские священнослужители, привозившие с собой ряд музыкальных инструментов, основали первые школы, где обучали музыке и пению индейцев. Музыкальная культура Аргентины вообще и музыкальный инструментарий в частности, формировались в результате синтеза музыкальных традиций испанских конкистадоров и местных индейцев. Эти музыкальные инструменты (как светские, так и духовные), в основном применялись для сопровождения церковных песнопений. Со временем местные племена, освоив конструкцию импортируемых инструментов, стали изготавливать их сами. Естественно, что при этом инструменты подвергались некоторым видоизменениям; их приспособливали к местным условиям, в частности, используя местные материалы вместо привозных. В то же время до сих пор существуют и местные самобытные индейские инструменты, которые пользуются популярностью в сельской среде, где имеются целые оркестры фольклорного типа.

Рассматривается около двадцати музыкальных инструментов различных видов, анализируется их происхождение, описывается применение в церковных обрядах и в быту.